

## ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 39/3

9 դեկտեմբերի 2016թ.

Քննարկվեց «Կառա և Կարեն» ՍՊԸ գանգատի հիման վրա կասեցված վարչական վարույթը վերսկսելու և ըստ էության որոշում կայացվելու հարցը:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Կառա և Կարեն» ՍՊԸ (այսուհետ նաև՝ ընկերության) գանգատը քննության է առնվել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 30.10.2015թ. նիստում: Արդյունքում կայացվել է թիվ 43/1 որոշումը, որի համաձայն՝ ընկերության գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցվել է: Նման որոշում կայացնելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում փաստաթղթեր են ստացվել «Կառա և Կարեն» ՍՊԸ վերաբերյալ, որոնք անմիջականորեն առնչվում են սույն գանգատին: Բացի այդ, սույն գործի վերաբերյալ իրավաչափ որոշում կայացնելու համար անհրաժեշտ էր լրացուցիչ ուսումնասիրել ընկերության կողմից իրականացվող գործունեությունը, մասնավորապես՝ ընկերությանը պատկանող արտադրամասից մանրածախ վաճառք իրականացնելու հանգամանքը:

Հաշվի առնելով, որ վերացել են վարույթի կասեցման հիմքերը, ինչպես նաև հիմք ընդունելով ընկերության ներկայացուցչի 01.11.2016թ. գրությամբ բերված միջնորդությունը, Հանձնաժողովը վերսկսում է 30.10.2015թ. թիվ 43/1 որոշմամբ կասեցված վարույթը՝ գանգատի վերաբերյալ ըստ էության որոշում կայացնելու համար:

ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 23.07.2014թ. թիվ 6110404 հանձնարարագրի համաձայն «Կառա և Կարեն» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում, կազմվել է ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 24.08.2015թ. թիվ 6110404 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Վարուժան Էվոյանի կողմից 12.08.2015թ. ժամը 10:00-ին ք.Վանաձոր, Կ.Դեմիրճյան 22 հասցեում գտնվող «Կառա և Կարեն» ՍՊԸ-ին պատկանող արտադրամասից կատարվել է գնում 660 դրամի չափով՝ 3 հատ «Նարինե» մածուց, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: «Կառա և Կարեն» ՍՊԸ-ի աշխատակիցը համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Ըստ Վանաձորի ՏՀՏ-ի տեղեկատվական բազայում առկա տվյալների, «Կառա և Կարեն» ՍՊԸ-ն տվյալ հասցեում չունի հաշվառված ՀԴՄ:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով Ակտով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված տուգանքը՝ գումարով 300.000 դրամի չափով:

Ընկերության գանգատում մասնավորապես նշված է, որ 12.08.2015թ. Վանաձոր քաղաքի Կ.Դեմիրճյան 22 հասցեում հսկիչ գնում չի իրականացվել, հարկային տեսուչ Վարուժան Էվոյանին «Նարինե» մածուն չի վաճառվել և հարկային տեսուչի կողմից կանխիկ դրամով վճարում չի կատարվել: Գանգատում փորձ է արվել նաև հիմնավորել, որ հսկիչ գնումն իրականացվել է գործող օրենսդրության պահանջների խախտմամբ:

Վերոգրյալի կապակցությամբ նախ հարկ է նշել, որ ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 23.07.2014թ. թիվ 6110404 հանձնարարագրով դրանում ընդգրկված հարկային տեսուչներին հանձնարարվել է «Կառա և Կարեն» ՍՊԸ-ում կատարել հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, ինչը նախատեսված է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով: Այսինքն, գանգատում բերված պնդումներն այն մասին, որ առանց «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ով նախատեսված ընթացակարգի պահանջների պահպանման ընկերությունում իրականացվել է հսկիչ գնում, հիմնավոր չեն, քանի որ վերոգրյալ հանձնարարագրով հանձնարարվել է կատարել ոչ թե հսկիչ գնում, որը «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ի 1.2 կետի համաձայն ուսումնասիրության տեսակ է, այլ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում:

Ինչ վերաբերվում է Ակտով արձանագրված խախտմանը, մասնավորապես՝ ընկերությանը պատկանող արտադրամասից կանխիկ դրամով 3 հատ «Նարինե» մածուն գնվելուն, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

Ինչպես որ վերը նշվել է, ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում փաստաթղթեր էին ստացվել «Կառա և Կարեն» ՍՊԸ վերաբերյալ: Նշված վարչության աշխատակիցների կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ ընկերությանը պատկանող արտադրամասից կանխիկ դրամով «Նարինե» մածուն վաճառվելու հանգամանքը պարզաբանելու ուղղությամբ: Ձեռնարկված միջոցառումների ընթացքում ձեռք են բերվել ապացույցներ, որոնք հիմնավորում են ընկերությանը պատկանող արտադրամասից առանց հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառման կանխիկ դրամով ապրանքների մանրածախ վաճառք իրականացվելու հանգամանքը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Վերսկսել Հանձնաժողովի 30.10.2015թ. թիվ 43/1 որոշմամբ կասեցված վարույթը:
2. ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 24.08.2015թ. թիվ 6110404 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ